ԿԱՆԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ XIX ԴԱՐԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Ա. Խ. ԲՐՈՒՏՅԱՆ

Արևելահայ պարբերական մամուլի էջերում XIX դարի երկրորդ կեսին քննարկվող բազմաթիվ խնդիրների շարքում որոշակի տեղ էր հատկացվում կանանց հարցին: 60-ական թվականներին կնոջ ազատության, իրավահավասարության, հասարակական դերի, կրթության ու դաստիարակության խնդիրներով հանդես էր գալիս «Հյուսիսափայլ» ամսագիրը: Ու թեև ամսագիրը վճռականորեն էր տրամադրված հայ կնոջ իրավազուրկ վիճակը փոխելու խնդրում, թեև փորձում էր ընդօրինակել ռուսական առաջադեմ մամուլին, մասնավորապես «Սովրեմեննիկին», այնուամենայնիվ զգալիորեն ետ էր մնում նրանից: Ինչպես նկատել է Մարգո Մխիթարյանը, կանանց հարցում «Հյուսիսափայլի» խմբագիր Ստ. Նազարյանի հայացքների մեջ «լիբերալ պահանջներն ու պահպանողական մտածողությունը երևան են գալիս գիրկընդխառն»[1]: Կնոջ լիիրավ ազատության հարցը պարբերականի հոդվածագիրները սահմանափակում էին միայն նրա այս կամ այն իրավունքի հաստատմամբ ու պաշտպանությամբ: Այդուհանդերձ, «Հյուսիսափայլը», հատկապես Միքայել Նալբանդյանի շնորհիվ, նորովի է մոտենում ինչպես հայ հասարակական կյանքի այլևայլ խնդիրների, այնպես էլ կանանց հարցին: Ամսագրի տարբեր համարներում հատվածաբար տպագրված «Հիշատակարանում» Մ. Նալբանդյանն անդրադառնում է հայ կնոջ թշվառ վիճակին, կարևորում նրա դերը ոչ միայն ընտանեկան կյանքում, այլև հասարակության մեջ: Ահա, ըստ Նալբանդյանի, ժամանակն է, որ ազգի վերաշինության ու փրկության գործով մտահոգ ուսյալները մտածեն նաև այս բացը լրացնելու մասին: Թերևս իբրև պատասխան՝ այսպիսի եզրակացության կարելի է հանգել Նալբանդյանի հնչեցրած հետևյալ հարցի. «...ո՛վ կրթեց ու դաստիարակեց նորանց, և նոքա յուրեանց անընդունակութեամբ չլուսաւորվեցան կամ մնացին վայրենի հասկացողութեան վիճակի մեջ»[2]: Աղջիկների կրթության ու դաստիարակության համար Նալբանդյանն անհրաժեշտ էր համարում բացել համապատասխան՝ իգական դպրոցներ: «Նալբանդյանի համար կնոջ խնդիրը սերտորեն կապված էր նրա քաղաքական և սոցիալական ազատագրման խնդրի հետ: Ազատ կնոջ իրավունքները նա շաղկապում էր աղջիկների դաստիարակության, մասսաների ընդհանուր լուսավորության և ազգային-ազատագրական ընդհանուր պայքարի հետ»[3],- գրում է Ա. Հովհաննիսյանը: Ըստ էության, «Հյուսիսափայլը» XIX դարի երկրորդ կեսին առաջինն սկսեց կանանց ազատության ու իրավահավասարության, հասարակական դերի, ինչպես նաև կրթության ու դաստիարակության հարցերի համակողմանի քննարկումը և իր ուսանելի փորձը հաղորդեց իրենից հետո հրապարակ իջած հայ մամուլի գրեթե բոլոր օրգաններին, այդ թվում և մանկավարժական մասնագիտական պարբերականներին: Խնդրին առանձնակի ուշադրություն էին դարձնում հատկապես մանկավարժ հրապարակագիրները: Կնոջ կրթությունը հայ մանկավարժները նախ և առաջ համարել են մի կողմից նրա ազատությունը նախապատրաստելու, մյուս կողմից այդ ազատությունից խելամտորեն օգտվելու միջոց[4]:

---

[1] Տե՛ս **Մ. Մխիթարյան**, «Հյուսիսափայլ», Եր., 1958, էջ 142:

[2] «Հյուսիսափայլ», Մոսկվա, 1859, № 9, էջ 691:

[3] **Ա. Հովհաննիսյան**, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. I, Եր., 1955, էջ 177:

[4] Տե՛ս **Գ. Հարությունյան**, Արևելահայ մանկավարժական միտքը 19-րդ դարի երկրորդ կեսին, Եր., 1978, էջ 79:

Ժամանակագրական առումով «Հյուսիսափայլին» անմիջապես հաջորդած «Հայկական աշխարհ» ամսագիրը՝ արևելահայ առաջին մանկավարժական պարբերականը (հրատարակվել է 1864-ից), թեև որոշ վերապահումներով, սակայն տարբեր խորագրերի ներքո զետեղած հրապարակումներում պարբերաբար անդրադարձել է լուսավորության տարածման խնդրին, հայկական և օտարերկրյա ուսումնարանների, այդ թվում և իգական վարժարանների վիճակին, կանանց կրթության և դաստիարակության հարցերին: Պարբերականի խմբագիր Խորեն Ստեփանեն, մոսկովյան ուսումնառության տարիներին սերտորեն կապված լինելով «Հյուսիսափայլ» ամսագրին, աշխատակցում է նրան և նրա միջոցով հաղորդակցվում հայ իրականությանը հուզող ժամանակի հրատապ խնդիրներին: Իսկ ուսումնառությունն ավարտելուց անմիջապես հետո՝ 1862-ին, վերադառնալով ծննդավայր Թիֆլիս՝ սկսում է պաշտոնավարել տեղի արական գիմնազիայում, ինչպես նաև Սուրբ Նունեի օրիորդաց ինստիտուտում: Ավելի մոտիկից ծանոթանալով աղջիկների կրթության խնդիրներին՝ ժողովրդի բարօրության գործին զինվորագրված մտավորականը 1868 թ. բացում է Մարիամյան օրիորդական ուսումնարանը, որի վերաբերյալ «Հայկական աշխարհ»-ի էջերում հաճախ կարելի էր կարդալ փոքրիկ լուրեր, մատենագիտական տեղեկություններ, վիճակագրական տվյալներ և այլն: Այսպես, պարբերականի 1869 թ. առաջին համարում տեղակայված «Ծանուցումք» ընդարձակ հայտարարությամբ խմբագրությունը տեղեկացնում է նորաբաց հիշյալ ուսումնարանի ընդունելության, ընդհանուր կարգի և գործող պայմանների, դրվածքի մասին: Միաժամանակ հայտնում է, որ կրթօջախում արդեն իսկ ուսանում են 32 սանուհիներ[5]: Ուսումնարանի կառավարիչ-տեսուչ Խորեն Ստեփանեին (նույն ինքը՝ «Հայկական աշխարհ»-ի խմբագիրը) խիստ մտահոգում է այն, որ որոշ «անուս» կանայք, ի չարս գործադրելով մի շարք ծնողների միամտությունը, փորձում են խաբեությամբ նրանց աղջիկներին «ուսումնառության» վերցնել իրենց մոտ: Պարբերականը, համոզված լինելով, որ Թիֆլիսի սուրբ առաջնորդարանը չափազանց ուշադիր է Մարիամյան ուսումնարանի նկատմամբ, միաժամանակ տարակուսանք է հայտնում, թե ինչու հոգ չի տանում այդ մասին:

Ազգի առաջադիմության և պահպանության խնդրում կարևորելով ուսման դերը՝ պարբերականը ընդգծում է կանանց կանոնավոր կրթության անհրաժեշտությունը. «Մենք պիտի աշխատենք ամեն կերպով ուսում տարածել, ուսումը պիտի փրկէ մեզ: Մանաւանդ պիտի աշխատենք օրիորդներ կրթել. բայց անբաղդաբար սորա մասին սակաւ ենք մտածում»[6]: Նշելով, որ Հավլաբարի բնակիչների մեծ մասը հայեր են, սակայն այնտեղ չկա ոչ մի օրիորդական ուսումնարան, պարբերականը հայտնում է, որ Խ. Ստեփանեն մտադիր է այդտեղ բացել մի ուսումնարան՝ իբրև Մարիամյան ուսումնարանի մի բաժին, սակայն դրա համար «բարի հայերի» օժանդակությունն է հարկավոր:

Մեկ այլ թղթակցությամբ պարբերականը տեղեկացնում է Թիֆլիսում սահմանված կանանց վճարովի դասերի մասին, որոնք կարդացվում են կլասիկական գիմնազիայում և որոնց մասնակցում են մոտ 100 կին: Ու թեև ունկնդիրների մեջ հայ կանայք և օրիորդները փոքր թիվ են կազմում, այնուամենայնիվ, ըստ նյութի հեղինակի՝ փաստն ինքնին ուրախալի է, քանի որ «Թիֆլիսում դասատվութեամբ և մանկավարժութեամբ պարապողներն աւելի կանայք են քան թէ այր մարդիկ: Ուստի այս դասերը նոցա պարապմունքի համար մեծ նշանակութիւն և օգուտ պիտի ունենան»[7]:

Պարբերականի խմբագիր Խորեն Ստեփանեն, տոգորված լինելով կրոնական գաղափարաբանությամբ, անշուշտ, հայ կնոջ դաստիարակության գործում կարևոր է համարում ավանդական հատկանիշների պահպանումն ու սերմանումը: Սա նկատելի է այդ թեմայով պարբերականում տպագրված գրեթե բոլոր նյութերում, անկախ հեղինակից: Կարևորելով մոր՝ որպես մանկան առաջին կրթողի դերը՝ պարբերականի Հայ-Բարեկամ թղթակիցը «Մանկական լաց» հոդվածում կրկին բարձրացնում է հայ կնոջ կանոնավոր կրթության կազմակերպման հարցը, որում կարևորում է հատկապես նրա բարոյական-

---

[5] Տե՛ս «Հայկական աշխարհ», Թիֆլիս, 1869, № 1:

[6] Նույն տեղում, 1869, № 3, էջ 100:

[7] «Հայկական աշխարհ», Թիֆլիս, 1870, № 2, էջ 63:

կամային հատկանիշների դաստիարակությունը. «...թող մեր օրիորդական ուսումնարանները պատրաստեն զօրութեամբ, համոզմամբ և դիմացկոտութեամբ ոգևորված ազնիւ մայրեր - և ստվերի գաղափար ունեցող մեր կեանքը կլինի իրական: Այստեղ բաց է ճանապարհը դէպի բարոյական փրկութիւն, դեպի երջանկութիւն»[8]:

Մեկ այլ՝ «Հայ-Երիտասարդ» ստորագրությամբ հեղինակ ընթերցողին է ներկայացնում ուշագրավ մի փաստ, ըստ որի եվրոպական մի շարք երկրներում կանայք բավականին լայն իրավունքներ ունեն: Մասնավորապես նշվում է, որ Գերմանիայում «կանանց բարոյական, մտաւորական և արհեստական կրթութիւնը ընդհանուր ուշադրութեան առարկայ է դարձել», Ֆրանսիայում «կանանց իրաւունքի խնդիրը ամենանոր հարցերից մինն է», Ամերիկայի Միացյալ Նահանգներում «ազատենք կինը» դարձել է համարեա ընդհանուր ձայն և կանայք այստեղ իւրեանց սեռի իրաւունքը աւելի առաջ են մղել քան թէ ուրևիցէ»[9] և այլն:

«Հայկական աշխարհ»-ում ուշագրավ է «Ցյուրիխի համալսարան» թղթակցությունը, որով Գրիգոր Արծրունին անդրադառնում է իր ծանոթ մի շվեյցարացու ծանուցած այն փաստին, ըստ որի երկու ռուս օրիորդներ 1866 թվականից բժշկություն են սովորում Ցյուրիխի համալսարանում: Նշելով, որ «կին ուսանող, կին աշխատող, մտաւոր, գիտնական կերպով աշխատող կին» երևույթը խորթ էր գերմանացիներին, թղթակցության հեղինակն ավելացնում է, որ թեև «հարյուրավոր տարիներ ի վեր Գերմանիայի քաղաքներում կանգնած են համալսարանները, սակայն ոչ մի կնոջ գլխում երբեք չի ծնվել այն բնական ցանկութիւնը տեսնելու և իմանալու թե ի՞նչ են անում, ի՞նչ են ուսուցանում այդ ահագին պատերի մեջ»[10]: Եվ չնայած հասարակական օրենքները Շվեյցարիայում կանանց թույլ են տալիս ուսում առնել համալսարաններում, այնուհանդերձ քաղաքացիները, դեռևս բազմաթիվ նախապաշարմունք ունենալով և հասարակական կարծիքին հետևելով, արգելք են դնում կանանց համալսարանական ուսումնառության հնարավորությանը: Նկարագրելով Ցյուրիխի համալսարանում ուսանող ռուս աղջիկներին հանդիպած արգելքներն ու դժվարությունները՝ Արծրունին տարակուսած հարց է բարձրացնում. «Մի՞թէ եվրոպական հասարակութիւնը այնքան անգամ խաբված է եղել իւր պատմագրական ընթացքում, այնչափ ընտելացաւ իւր դարևոր անշարժութեան աւանդութիւններին, որ այլևս չէ հաւատում մարդկային բնաւորութեան զօրութեանը... չէ հաւատում մարդի բնութեան ազնիւութեանը, չէ հաւատում վերջապէս մարդի ձգտողութեանը...»[11]: Շարունակելով տեղեկությունը Ցյուրիխի համալսարանի ուսանող օրիորդների մասին՝ Արծրունին հայտնում է, որ նրանք շատ տղա ուսանողներից ավելի եռանդով էին աշխատում և ավելի զարգացած էին: Նրանցից մեկը 1867 թ. հիանալի հանձնում է բժշկության դոկտորի համար անցկացված քննությունը, և այդ մասին գրում են եվրոպական մի շարք պարբերականներ: Երևույթը բավականին ոգևորիչ էր, և այդ աղջիկների օրինակին հետևեցին շատերը: Արդյունքում՝ արդեն հաջորդ տարի Ցյուրիխի համալսարանի սովորողների թվում տարբեր ազգության ութ ուսանողուհի էր սովորում[12]:

«Հայկական աշխարհ»-ը հաճախ է անդրադարձել ընտանիքում կնոջ դերի բարձրացման, նրա՝ որպես ամուսնու ընկեր ու գործակից լինելու խնդիրներին: Բայց ինչպե՞ս են արտահայտվում կնոջ այդ հատկանիշները հայ ընտանիքում, ի՞նչ իրավունքներ են տրվում նրան, ո՞րն է նրա իսկական կոչումը: Այս հարցերն է արծարծում ամսագրի աշխատակից Համբարձում Առաքելյանը «Իգական սեռի դաստիարակութիւնը» հոդվածում: Անդրադառնալով Արարչի կողմից կնոջ ստեղծման մասին ուսմունքին՝ հեղինակը նշում է. «Աստվածային պատուիրանին համեմատ, ամենակատարեալ երջանկութիւն այն տանը մէջ կլինի, երբ ամուսինը և կինը միմեանց սիրում են. այդ սէրը կարող է միշտ կնոջը հնազանդութեան և մարդին չափաւորութեան մէջ պահել. կինը երբ սիրում է իւր ամուսինը, կուրօրէն հնազանդում է նորա բոլոր կամքին և նորան իբրև իւր գլխի տէրն է համարում և

---

[8] Նույն տեղում, էջ 88:
[9] Տե՛ս նույն տեղը:
[10] Տե՛ս «Հայկական աշխարհ», Թիֆլիս, 1869, № 3, էջ 68:
[11] Նույն տեղում:
[12] Տե՛ս նույն տեղը:

նորան միայն պարծենում, իսկ ամուսինը երբ սիրում է իւր կինը, նորա ոչ թէ իւր ստրուկ գերին, այլ իւր համահաւասար ընկեր և գործակից է իմանում»[13]: Իբրև հայտնի ճշմարտություն՝ հոդվածագիրն ընդգծում է, թե ամուսնու համար աշխարհում կնոջից առավել սիրելի ու գեղեցիկ ոչինչ չկա: Սակայն հայ կինը դեռևս ազատ չէ իր «գովանի» հատկանիշներն արտահայտելու. հայ տղամարդը ճնշում է դրանք և կնոջը, ըստ էության, դարձնում թույլ ու անկամ մի էակ, որի դերը սահմանափակվում է միայն տնային ծառայությունների մեջ: Հայ ընտանիքը դեռևս կաշկանդված է նահապետական սովորույթներով, մինչդեռ աշխարհի շատ ու շատ ժողովուրդներ նույն ժամանակաշրջանում առաջընթաց են ապրում, զարգանում: Հոդվածի հեղինակը միանգամայն համոզված է, որ պետք է թողնել կորստաբեր սովորույթները և հետևել զարգացած ազգերին, որոնք «այսօրվան օրս առանձին խնամք և ուշք են դարձրել իգական սեռի դաստիարակութեան վերա, ամենայն տեղ բանում են օրիորդական ուսումնարաններ, և պատրաստում են ապագայի համար արժանաւոր և առաքինի մայրեր»[14]: Ի վերջո, չէ՞ որ ամբողջ ազգի դաստիարակությունը պայմանավորված է հենց կնոջ դաստիարակությամբ, քանի որ նա է երեխայի՝ ազգի ապագա քաղաքացու առաջին դաստիարակը: Ահա թե ինչու քաջ ու բարոյական զավակներ ունենալու համար պետք է առաջին հերթին իգական սեռին դաստիարակել: Սա հոդվածագրի ու նաև պարբերականի համոզմունքն է: Խնդիրն ավելի արտահայտիչ ներկայացնելու համար հրապարակագիրը վկայակոչում է ամերիկացիներին, որոնք համոզված են, որ «հայրենասէր զաւակներ ունենալու համար հարկաւոր է պատրաստել մայրեր, և այդ դժուար պաշտօնն իւրեանց վերա են ստանձնել օրիորդական ուսումնարանները, ուր աղջիկներն ստանում են իրենց համար հարկաւոր եղած կրթութիւնը և գիտութիւնները»[15]: Զարմանալի է, սակայն, որ այս ամենը խիստ կարևորելով հանդերձ հոդվածագիրը հայ կանանց կրթության հարցը տեսնում է սահմանափակ տիրույթում՝ նշելով, թե «որովհետև կրթութիւնը բոլորովին մի յարաբերական խնդիր է, ուստի մենք պիտի ջանանք մեր օրիորդներին այն աւանդել, ինչ որ հարկաւոր և բաւական է մայրական քաղցր և նուիրական պաշտօնն կատարելու համար»[16]: Այդուհանդերձ, ընդգծելով կնոջ կրթության և դաստիարակության անհրաժեշտությունը, հոդվածագիրը թարգմանաբար մեջբերում է անում գերմանական «Կանանց դաստիարակության համար» օրագրից, որտեղ մասնավորապես նշված է, թե «այն ազգերը, որոնց մէջ զանցառութեան է տուած կանանց դաստիարակութիւն, պիտի անշուշտ կործանվին և կորչին այն ազգերի պատերազմի մէջ, որոնք ոչ թէ միայն մարդիկ, այլ և կնոջ գործակից են արել առաջադիմութեան մէջ»[17]:

Աղջիկների դաստիարակության, կրթության, առհասարակ կնոջ հասարակական դերի ու նշանակության մասին բազմաթիվ հրապարակումներով հանդես է եկել «Մանկավարժական թերթ» ամսագիրը: Պարբերականի էջերում, ի թիվս տարաբնույթ նյութերի, հակիրճ լուրերի տեսքով տեղեկություններ են հաղորդվում առհասարակ հայ կրթօջախների և մասնավորապես իգական դպրոցների մասին: Այսպես, 1878 թ. օգոստոսյան համարում պարբերականը ծանուցում է Ախալցխայի Եղիսաբեթյան և Թիֆլիսի Գայանյան հայ օրիորդական միջնակարգ դպրոցներում նոր ուսումնական տարում բացվող դասարանների մասին: Մեկ այլ թղթակցությամբ տեղեկացվում է 1877-1878 ուսումնական տարվա ընթացքում Վրաստանի և Իմերեթի թեմի տարբեր բնակավայրերում նոր ծխական ուսումնարանների բացվելու մասին և հավելում, որ նույն ժամանակահատվածում Թիֆլիսում բացվել է նաև Անանյան օրիորդական դպրոցը երկու նախակրթարանով և առաջին դասարանով, իսկ սեպտեմբերից բացվելու է երկրորդ դասարանը[18]:

Ամսագիրը պարբերաբար անդրադարձել է նաև արևմտահայ իգական վարժարանների, այդ հատվածում կանանց կրթության կազմակերպման հարցին:

---

[13] «Հայկական աշխարհ», Թիֆլիս, 1875, № 1, էջ 234:
[14] Նույն տեղում, էջ 235:
[15] Տե՛ս նույն տեղը, էջ 238:
[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում, էջ 240:
[18] «Մանկավարժական թերթ», Թիֆլիս, 1878, № 2, էջ 64:

Ընդհանրապես հայ իրականության մեջ լուսավորության տարածման, այդ թվում և կանանց կրթության կազմակերպման գործում զգալի դեր են կատարել կրթասիրական-բարեգործական միություններն ու ընկերությունները, որոնց նախաձեռնությամբ ու նյութական աջակցությամբ բացվել են նոր դպրոցներ, իրականացվել անգրագիտության վերացմանն ուղղված տարաբնույթ միջոցառումներ: Իրենց նպատակների իրագործման ճանապարհին ընկերությունները հաճախ են դիմել մամուլի օժանդակությանը՝ նրա էջերում հանդես գալով հայտարարություններով, առաջարկություններով ու հաշվետվություններով: «Մանկավարժական թերթ»-ը, հերթական համարներից մեկում զետեղելով ««Արարատեան ընկերութիւնը», դորա նամակը առ խմբագրութիւնս եւ պատուոյ անդամակցութեան կանոնագրութիւնը» հրապարակումը, տեղեկացնում է, որ հիշյալ ընկերությունը պարբերականին հղած նամակով խնդրել է հորդորել մեր հայրենակիցներին՝ անդամակցվելու Ընկերությանը և դրանով աջակցել իր ջանքերը «ի լուսաւորութիւն հայրենեաց»[19]: Պարբերականը միաժամանակ հրապարակում է Մկրտիչ Փորթուգալյանի թղթակցությունը, որով տեղեկություններ է հաղորդում տարբեր ուսումնարանական ընկերությունների և Վանի դպրոցների մասին: Հեղինակն ընդգծված համակրանքով է խոսում հատկապես Սանդխտյան ընկերության վերաբերյալ և նշում, որ Վանում արական սեռի համար 8 վարժարան կա, մինչդեռ օրիորդների համար միայն 2-ը, որոնցից մեկը Սանդխտյան վարժարանն է Այգեստանում, մյուսը՝ «Քաղաքին մէջ Շուշանեան» վարժարանը: Ազգի առաջադիմության գործում կարևորելով ընտանիքի դերը՝ Փորթուգալյանն անդրադառնում է կնոջ կրթության խնդրին. «...Ազգային կեանքի յեղափոխութիւնն ընտանեկան շրջանէն կը սկսուի, Վանի մէջ մանաւանդ, ուր բանական կինն դատապարտուած է անբան (անխօս) լինիլ. ուր գրեթէ ընտանեկան կեանք չը կայ, ընտանեկան շրջանի մէջ մի մեծ յեղափոխութիւն հարկաւոր է, զոր շատ դժվար կը երևի կատարել»[20]: Այնուհետև հեղինակը իր իսկ «Ո՞վ պիտի անէ զայդ» հարցին ի պատասխան նշում է, թե՝ Սանդխտյան վարժարանը, որը, սակայն, իր առկա դրությամբ մեծ բան չի խոստանում ապագայի համար, քանի որ նոր ժամանակներում այնտեղ դեռևս հնացած, փտած մեթոդներով են աշխատում դաստիարակել Վանի ապագայ մայրերին»: Խոսելով հիշատակված և Վանի մյուս վարժարաններում ուսուցման հետաղիմական մեթոդների մասին՝ հրապարակման հեղինակը նշում է, որ դրանք միանգամայն անհարիր են արդի մանկավարժական դրությանը: Այնուհետև նա ցավով նկատում է, որ Թուրքիայի հայերի մեջ մանկավարժական նոր մեթոդներին համապատասխան ստեղծված դասագրքեր գրեթե չկան: Ավելին, դեռևս վիճահարույց է նախակրթարանում գրաբա՞ր, թե՞ աշխարհաբար լեզվով ուսուցանելու խնդիրը: Եվ դա այն դեպքում, երբ Ռուսաստանի հայերի համար այդ խնդիրը վաղուց լուծված է:

Իգական սեռի կրթության ու դաստիարակության խնդիրը բազմիցս արծարծվել է «Վարժարան» ամսագրում: Պարբերականի «Այլ եւ այլք» բաժնում հաճախ ենք հանդիպում հիմնականում լուրի ժանրով գրված նյութերի, որոնք տեղեկություններ են հաղորդում հայկական տարբեր թեմերում գործող իգական վարժարանների վերաբերյալ: 1881-82 ուսումնական տարում Վրաստանի և Իմերեթի թեմում եղած ուսումնարանների մասին հայտնած վիճակագրական տեղեկությունից իմանում ենք, որ թեմում գործում են 76 արական և 18 իգական ուսումնարաններ, ուսուցիչների թիվը 185 է, իսկ ուսուցչուհիներինը՝ 55, արական սեռի ուսանողների թիվը 3472 է, մինչդեռ իգական սեռինը՝ 1472 [21]: Մեկ այլ լուր տեղեկացնում է Թիֆլիսի Ս. Գայանյան հայ օրիորդների միջնակարգ ուսումնարանի տարեդարձի առիթով կազմակերպված միջոցառման մասին: Հայտնվում է նաև, որ կրթօջախի 30 ուսուցիչ-ուսուցչուհիներից 12-ն աշխատում են ձրի, 18-ը՝ ռոճիկով: Իսկ 268 սովորողներից 51-ը որդեգրուհի են[22]: Սակայն պարբերականի խնդիրը միայն փաստերն արձանագրելը չէ: Այն խորին սրտացավությամբ նաև իր մտահոգությունն է արտահայտում իգական վարժարանների կարիքների, հաճախ ծայրահեղ անմխիթար վիճակի առիթով:

---

[19] Տե՛ս նույն տեղը, 1879, № 8, էջ 57:

[20] «Մանկավարժական թերթ», Թիֆլիս, 1879, № 8, էջ 57:

[21] Տե՛ս «Վարժարան», Թիֆլիս, 1882, №№ 1 և 2, էջ 102:

[22] Տե՛ս նույն տեղը, № 3, էջ 44:

Այս տեսակետից նրա ուշադրության կենտրոնում է Հավլաբարի Ս. Հռիփսիմյան օրիորդական դպրոցը, որը «սաստիկ անհախանձելի դրութեան մէջ է»: Այդ մասին բարձրաձայնելով՝ պարբերականն իր պարտքն է համարում այդկերպ թեմական վերատեսչի ուշադրությունը հրավիրել հիշյալ իրողության վրա և հույս է հայտնում, որ հոգաբարձուները, որոնք այնպես սիրով ձեռնարկեցին դպրոցի բացումը, կհոգան նրա մասին:

Աղջիկների կրթության գործի կազմակերպման հարցում մեծ է եղել Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերության դերը: Նպատակ ունենալով հատկապես չունևոր ընտանիքների աղջիկներին արհեստներ սովորելու հնարավորություն ընձեռել՝ Ընկերությունը 1883 թ. Թիֆլիսում հիմնում է Ս. Նշան հանրակրթական դպրոցը, ուր հատուկ ուշադրություն էր նվիրվում ձեռագործի, կարուձևի, տնարարության և այլ հարցերին[23]: Ընկերության վարչությունը մտահոգ էր ոչ միայն հայ օրիորդներին արհեստներ ուսուցանելու խնդրով, այլև նրանց որոշակի մասնագիտական կրթության հարցերով, մասնավորապես մանկավարժության և բժշկության բնագավառներում: Այս խնդրին անդրադառնալով՝ «Վարժարանը» միաժամանակ իր ընթերցողներին տեղեկացնում է, որ Ընկերության վարչությունը որոշել է 1883 թ. սեպտեմբերից մի հայ օրիորդ որդեգիր ունենալ՝ Ս. Պետերբուրգում մանկավարժություն կամ բժշկություն ուսանելու համար[24]:

Արևելահայ իրականության մեջ առաջ եկած ու իրենց տեղը հաստատած օրիորդաց ուսումնարանները, հիրավի, հայ մտավոր առաջընթացի արգասիք էին: Քննական հայացք ձգելով դրանց վերջին 15-20 տարիների (1860-1880-ական թթ.) ընթացքին՝ «Վարժարանի» աշխատակից Հ. Չիգիանյանը կարծում է, որ դրանք իրենց գործունեության համար ճիշտ նպատակներ են ընտրել՝ «կրթել հայ աղջկան ընտանիքի համար երեք տեսանկյունից- այն է իբրև կին, այր մարդու ընկեր, իբրև մայր, սկզբնական կրթող իր զաւակների եւ իբրև տանտիկին, որ տան տնտեսութիւնը պէտք է հոգայ»[25]: Այդուհանդերձ, ըստ հոդվածագրի, ամեն տեղ չէ, որ հստակ է, թե ինչ ճանապարհներով կարելի է իրականացնել այդ նպատակները:

Կարևորելով կրթված կնոջ դերը հասարակության մեջ՝ «Վարժարանը» անդրադառնում է նաև օրիորդաց գիշերօթիկ վարժարանների (ինստիտուտների), մտավոր կրթության և բարոյական կատարելության և այլ խնդիրների:

XIX դարի երկրորդ կեսին, մասնավորապես 60-70-ական թթ., արևելահայ մանկավարժական մտքի զարգացման և դպրոցաշինության վերելքի պայմաններում ուրույն առաքելությամբ հանդես եկող մանկավարժական պարբերականներն իրենց ծրագրային խնդիրների շարքում էական տեղ են վերապահել նաև աղջիկների կրթության ու դաստիարակության հարցերին: Վեր հանելով առկա բազմաթիվ հիմնախնդիրներ՝ նրանք փորձել են իրենց ձայնը լսելի դարձնել հանրությանն ու հատկապես ազգի «երևելիներին» և հուսացել, որ վերջիններիս հոգաբարձությամբ ու աջակցությամբ դրանք թերևս ավելի արագ ու նպաստավոր լուծում կստանան:

А. Х. БРУТЯН — ***Проблема женского образования в восточноармянской прессе XIX в.*** — Во второй половине XIX в. проблема прав армянской женщины, а также вопросы ее образования и воспитания разносторонне и широко обсуждались как в художественной и педагогической литературе, так и в периодической печати. Представители передовой общественной мысли и, в частности, педагоги, выступая на страницах профессиональной периодики, связывали утверждение прав армянской женщины с систематическим общим образованием, требовали поставить его на те же основы, что и мужское образование. В многочисленных публикациях на эту тему выдвигались идеи, порой противоречащие друг другу, и тем не менее из них с очевидностью следовала неизбежность решения назревшей и исключительно важной для общественного развития проблемы женского образования.

---

[23] Տե՛ս Ֆ. Միքանյան, Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, Եր., 1971, էջ 181:

[24] Տե՛ս «Վարժարան», Թիֆլիս, 1883, № 6, էջ 50:

[25] Նույն տեղում, 1882, № 3, էջ 11: